

# Հ Ա Ն Դ Է Ս Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

## ԿԱՐԳ ՕՍՄԱՆԵԱՆ ԹԱԳԱԻՈՐԱՅ

Օսմանեան թագաւորութիւնը չծագած, Անատոլի Գոնեա քաղաքը թագաւոր և սուլդան կը նստէին տաճիկ ցեղէ մը, որ Սելճուզեան կ'ըսուէր: Անոնց ժամանակը թուրքաստանու երկրէն մեծ իշխան մը Սիւլէյման Շահ անուով փախաւ Ճենկիզ Խանայ ձեռքէն ու ապաստանեցաւ Հայաստան և եկաւ մինչև Հալէպի քովերը մեռաւ: Անոր որդին էր թողուլ նոյն ժամանակուան Գոնեայու Ալայէտտին սուլդանէն տեղ ուղեց, ու բնակեցաւ Գարաճա ըսուած լեռը՝ հետն եղած տներովն, որ 400 էին. իր որդին Օսման անունով, զօրապետ եղաւ Ալայէտտինի: Երբոր Ալայէտտին բռնուեցաւ թաթարներէն, Սելճուզեան թագաւորութիւնը վերջացաւ, անոր իշխանները մէյմէկ ինքնազուխ թագաւոր եղան, որով Օսման ալ գլուխ քայեց և առաջին թագաւոր եղաւ Օսմանցոյ:

Սուլդան Օսման Ա Ղազի, ծնաւ յամին 1259, թագաւորեց 43 տարուան, նստաւ 27 տարի, և մեռաւ 70 տարուան: Գոնեա դրաւ թագաւորութիւնը յամին 1299, տիրեց Յունաց կայսերութեան երկիրներուն՝ մէկ կողմանէ մինչև Սև ծով, և միւս կողմանէ մինչև Պրուսա ու Էնի-չէհր: Տաճիկ Սելճուզեանց տէրութեան երկիրներովը մեծցաւ, և եկաւ

միանգամայն Օսմանցոց ցեղին գլուխը և թագաւորութեան հիմնադիրը: Մեռաւ բնական մահուամբ յամին 1325, և կ'ըսեն թէ մեռած ժամանակը քոջն ստակ մը չգտնուեցաւ:

Սուլդան Օրխան Ղազի, Օսմանի երկրորդ որդին, թագաւորեց 46 տարուան յամին 1325, նստաւ 35 տարի, մեռաւ 81 տարուան: Ինքն հաստատեց Ենիչէրի զօրքը, և առաջին սուլդանն եղաւ որ կոչուեցաւ փառիչախ: Մեռաւ բնական մահուամբ յամին 1359: Ասոր օրն Օսմանցիք տիրեցին Նիկովիդիոյ, Նիկիոյ, Բիւթանիոյ մնացած մասին, փոքր-Ասիոյ մեծագոյն մասի մը, Թրակիոյ, Պուլլարիոյ, և հասան մինչև Կոստանդնուպօլսի արուարձանները: Սուլդան Օրխան Գոնեայէն թագաւորութեան աթոռը փոխադրեց Պրուսա և հօն թաղուեցաւ:

Սուլդան Մուրատ Ա Ղազի խիւտաւ վէնտիկեար, Օրխանի երկրորդ որդին, թագաւորեց 35 տարուան յամին 1359, նստաւ 31 տարի, մեռաւ 66 տարուան: Տիրեց Ադրիանուպօլսի, և տէրութեան մայրաքաղաքն ըրաւ զայն: Երեսունը եօթը պատերազմ տուաւ քրիստոնէից դէմ, որոնց զաշնակցեր էին Սերուիացիք, Պուլլարք և Մաճառք, ու մեծ յաղթու-

Թեան մը երկրորդ օրն, երբ պատերազմին զաշան այցելութեան եկեր էր, Քոստայի մօտ, Սերուխացի իշխան մը, Միւլը Քանովիչ, քովը մօտեցաւ ու դանաւ ի՞նչ զարկաւ սպաննեց զինքը յամին 1389:

Սուլդան Պայէզիտ Երլտըրըմ, կամ Սուլդան Պայէզիտ Ա, որդին Մուրատայ Ա, Թագաւորեց 31 տարուան յամին 1389, նստաւ 14 տարի, և մեռաւ 45 տարուան: Թագաւորելուն պէս խրդղել տուաւ իր անդրանիկ եղբայրը, որ տէրութիւնն առնուլ կ'աշխատէր: Կոստանդնուպօլսի վրայ եկաւ պաշարեց, և ընելով որ Մաճառները Նիկոպօլիսը պատեր են 130 հազար զօրքով, թողուց Կոստանդնուպօլսի պաշարումը, հասաւ վրանին և յաղթեց անոնց, որով ըսուեցաւ Երլտըրըմ: Սակայն 1էնկ-թիմուրընդհատեց Պայէզիտի յաղթութիւնները, գերի բռնեց զինքը, և երկաթի վանդակի մէջ դրած հետը կը պարտցունէր մինչև որ մեռաւ յամին 1403:

Սուլդան Սիւլէյման Ա, նստաւ Թագաւոր Ազրիանուպօլիս յամին 1403, մինչդեռ իր եղբայրը Մուսա Թագաւորեց Ասիա: Թամին 1410 Մուսայաջողեցաւ բռնել ու խղղել տալ իր եղբայրը Սիւլէյման:

Սուլդան Մէհմէտ Ա Չէլէպի, աթոռէն վար առաւ Մուսան օգնութեամբ Կոստանդնուպօլսի Մանուէլ կայսեր, Թագաւորեց 36 տարուան, նըստաւ 8 տարի, ապրեցաւ 43 տարի: Այս Մէհմէմէտն առաջին եղաւ նաւատորմից կազմելու Թուրքիոյ: Մեռաւ բնական մահուամբ Ազրիանուպօլիս յամին 1421:

Սուլդան Մուրատ Բ Արդար, Թագաւորեց 18 տարուան յամին 1421, նստաւ 30 տարի ու կէս, մեռաւ 49 տարուան: Անուանի եղաւ օսմանեան Թագաւորաց մէջ, հարկատու ըրաւ Պոսնիան, բայց իրեն դէմ ելան Յովհաննէս

Ունիատ և Աբանտէրպէկ: Մուրատ երկու անգամ հրաժարեցաւ Թագաւորութենէ տեղը զնելով իր որդին, առաջին անգամ սրտին ցաւէն՝ կրած պարտութեանցի համար, որ տուին Եպիստոսի և Ալպանիոյ իշխանները. երկրորդ անգամ՝ սիրելով խաղաղ ու հանդիստ կեանքը: Երրորդ անգամ մ'ալ աթոռ ելաւ իշխանաց աղաչելովը. ու մեծ յաղթութիւն ըրաւ, և կաթուածէ զարնուելով մեռաւ խնճոյից մէջ, յամին 1451:

Սուլդան Մէհմէմէտ Բ Ֆաթիհ, կամ Էպիւլ Ֆէթիհ Ղազի, Թագաւորեց 21 տարուան յամին 1451, նստաւ 31 տարի, և մեռաւ 53 տարուան: Օսմանեան Թագաւորաց մէջ ամենէն քաջն եղաւ. առաւ Կոստանդնուպօլիսը յամին 1453 մայիսի 29: Յանկարծական բայց բնական մահուամբ մեռաւ յամին 1481: Բոլոր իր եղբայրներն սպաննել տուաւ, որպէս զի Թագաւորութիւնը որդւոյն մնայ:

Սուլդան Պայէզիտ Բ Վէլի, անցաւ հօրը տեղն 35 տարուան, յամին 1481. նստաւ 32 տարի, և ապրեցաւ 67 տարի:

Սուլդան Սէլիմ Ա Եափուզ, Թագաւորեց 42 տարուան յամին 1512, նստաւ 8 տարի և 8 ամիս, ապրեցաւ 51 տարի: Տիրեց Եգիպտոսի և անուանեց ինք զինքը ծառայ սուրբ քաղաքացն Մէքքէի և Մէտինէի, և մեռաւ բնական մահուամբ յամին 1520:

Սուլդան Սիւլէյման Բ Սահպագանուն, Թագաւորեց 26 տարուան յամին 1520, նստաւ 48 տարի, և ապրեցաւ 74 տարի: Ասոր պէս բարդաւոր Թագաւոր չէ եղեր օսմանցուց մէջ. տասնկորս մեծ պատերազմներ ըրաւ և յաղթեց, Հոռդոս կղզոյն տիրեց, բոլորն երեք հարիւր վաթսուս և վեց բերդ առաւ, և շատ շէնք շինեց: Մեռաւ հիւանդութեամբ յամին 1566:

Սուլդան Սէլիմ Բ Հալիմ, որդին Սիւ-  
լէյմանայ, թագաւորեց 44 տարուան  
յամին 1566, նստաւ 8 տարի 5 ամիս  
և 15 օր, մեռաւ 52 տարուան: Բարուք  
ըրօսասէր էր. Կիպրոսն առաւ վենե-  
տիկեցիներէն, բայց Ղէբանդոսի ծովա-  
ծոցին դիմացը ծովու վրայ յաղթուե-  
ցաւ վենետիկեցիներէն և այլ քրիստո-  
նէից նաւատորմէն յամին 1571: Ժան-  
տատենդէ (fièvre pernicieuse) բռնուե-  
լով մեռաւ յամին 1574:

Սուլդան Մուրատ Գ, թագաւորեց  
29 տարուան յամին 1574, նստաւ 20  
տարի և 8 ամիս, ապրեցաւ 50 տարի:  
Թագաւորելուն պէս սպաննել տուաւ  
հինգ եղբարքը, 135 զաւակ ունեցաւ և  
հիւժուած մեռաւ յամին 1294:

Սուլդան Մէհմէտ Գ, թագաւորեց  
29 տարուան յամին 1594, նստաւ 9  
տարի և 2 ամիս, ապրեցաւ 37 տարի և  
8 ամիս: Թագաւորելուն պէս սպաննել  
տուաւ իր տասն և ինն եղբարքն, որ  
մնացեր էին հօրը մահուան ժամանակ:  
Հիւանդութեամբ մեռաւ յամին 1603:  
Նախ յաղթուեցաւ Եւրոպացիներէն,  
եպէն այնպէս յաղթեց անոնց որ 100  
հազար մարդ կոտորեց կ'ըսեն: Ասոր օրը  
սովորութիւն մտաւ ծխախոտ գործա-  
ծել ՚ի Կոստանդնուպօլիս:

Սուլդան Ահմէտ Ա, թագաւորեց 14  
տարուան յամին 1603, նստաւ 14 տա-  
րի, ապրեցաւ 28 տարի, և չսպաննեց  
իր եղբարքը:

Սուլդան Մուսղաֆա Ա, եղբայրն Ահ-  
մէտայ, թագաւորեց 25 տարուան յա-  
մին 1617, նստաւ 3 ամիս և 3 օր, ետ-  
քէն ներքինիք վար իլուցին զինքը թա-  
գաւորութենէ, վասն զի ընդունակ չէր  
կառավարելու:

Սուլդան Օսման Բ, որդին Ահմէտի Ա,  
հօրեղբօրը տեղը թագաւորեց 14 տա-  
րուան, նստաւ 4 տարի և 4 ամիս և 10 օր,  
ետքէն Ենիկէրինսերը վար առին զին-

քը, ու Ենտի-Գուլէ խեղճամահ սպան-  
նեցին, և նորէն Սուլդան Մուսղաֆա  
Ա երկրորդ անգամ թագաւոր զրին յա-  
մին 1621, որ տասն և վեց ամիս թագա-  
ւորելէն վերջը, խենթեցաւ ու դարձեալ  
վար առին զինքը:

Սուլդան Մուրատ Գ, որդի Ահմէտայ  
Ա, թագաւորեց 14 տարուան յամին  
1622, նստաւ 17 տարի, ապրեցաւ 31  
տարի: Անգուլթ ու առելի էր ամենուն:  
Մահուան անկողնոյն մէջէն հրամայեց  
որ սպաննեն իր եղբայրն Իպրահիմ, և  
բռնի անկողնէն զուրս ելլել ուզելով  
տեսնելու թէ հրամանը կատարուեցաւ,  
նոյն տեղն ընկաւ մեռաւ յամին 1640:

Սուլդան Իպրահիմ, զոր մայրն ազա-  
տեր էր մահուանէ, թագաւորեց 25  
տարուան յամին 1640, նստաւ 8 տարի  
և 9 ամիս, ետքը ժողովորդը ոտք ելլե-  
լով վար առին զինքը ու սպաննեցին  
յամին 1648:

Սուլդան Մէհմէտ Գ, որդի Իպրա-  
հիմայ, թագաւորեց 7 տարուան յամին  
1648, նստաւ 40 տարի և 7 ամիս, ետ-  
քը վար առին զինքը, Աղբիանուպօլիս  
պալատան մը մէջ գոցեցին, ուր 5 տարի  
և 8 ամիս ապրեցաւ, և 53 տարուան  
մեռաւ յամին 1687: Շատ պատերազ-  
մներ քրաւ, իր օրը թուրքերն ինչուան  
վեննայի պարսպաց տակն եկան, բայց  
յաղթուեցան Սոպիեաքի Ղեհաց թա-  
գաւորէն:

Սուլդան Սիւլէյման Գ, եղբայր Մէ-  
հմէմէտայ Գ, թագաւորեց 47 տարուան  
յամին 1687, նստաւ 3 տարի և 8 ամիս,  
ապրեցաւ իբր 50 տարի: Զրգողու-  
թեամբ մեռաւ յամին 1694:

Սուլդան Ահմէտ Բ, որդի Իպրահիմայ,  
թագաւորեց 50 տարուան յամին 1694,  
նստաւ 3 տարի և 8 ամիս, 25 օր,  
ապրեցաւ 54 տարի, և նախորդին նման  
մեռաւ Ղրգողութեամբ յամին 1694:

Մուղան Մուսղաֆա Բ, որդի Մէ-  
հէմէտայ Գ, յաջորդեց հօրեղբօրն Ահ-  
մէտայ Բ, թագաւորեց 32 տարուան  
յամին 1694, նստաւ 8 տարի և 9 ամիս,  
17 օր, ապրեցաւ 40 տարի ու 7 օր: Պա-  
տերազմեցաւ Մաճառներուն դէմ, ետ-  
քէն զնաց Ռուսաց Մեծին Պետրոսի  
վրայ, Գարլովիցի դաշնադրութեամբ  
հաշտութիւն ըրաւ յամին 1699, և  
թագաւորութենէ հրաժարեցաւ՝ իրեն  
դէմ ապստամբութիւն մ'եղլելով յա-  
մին 1703, ու քիչ ժամանակէն մեռաւ:

Մուղան Ահմէտ Գ, յաջորդեց իր եղբօ-  
րը թագաւորելով 30 ու կէս տարուան  
յամին 1703, նստաւ 27 տարի և 11 ա-  
միս, ետքէն հրաժարեցաւ Եէնիշէրինե-  
րուն ապստամբելովն յամին 1730. և  
քանի մը տարի զոցուած կենալէն ետև  
մեռաւ 67 տարուան: Շուեստաց կարո-  
լոս ԺԲ թագաւորին գրգռմամբը Ռու-  
սաց Մեծին Պետրոսի դէմ պատերազմ  
բացաւ:

Մուղան Մահմուտ Ա, թագաւորեց  
35 տարուան յամին 1730, նստաւ 24  
տարի, ապրեցաւ 60 տարի: իրեն ժա-  
մանակը Պելկրատի դաշնադրութիւնը  
կըրուեցաւ: Քարի հիւանդութեամբ  
մեռաւ:

Մուղան Օսման Գ, եղբայր Մահմու-  
տայ Ա, թագաւորեց 58 տարուան յա-  
մին 1754, նստաւ 3 տարի, ապրեցաւ  
61 տարի:

Մուղան Մուսղաֆա Գ, թագաւորեց  
42 տարուան յամին 1757, նստաւ 17  
տարուընէ քիչ մը պակաս, ապրեցաւ  
58 տարի: Պարզեց Մէհէմէտի դրօշն  
ընդդէմ Կատարինեայ Բ Ռուսաց կայս-  
րուհւոյն մերթ յաղթելով ու մերթ յաղ-  
թուելով: Մեռաւ բնական մահուամբ  
յամին 1773:

Մուղան Ապտիւ-Համիտ Ա, որդի Ահ-  
մետայ երրորդի, թագաւորեց 50 տա-  
րուան յամին 1773, նստաւ 15 տարի և

8 ամիս ու 3 օր, ապրեցաւ գրեթէ 66 տա-  
րի, Հաշտութիւն ըրաւ Ռուսաց հետ,  
դարձեալ պատերազմ բացաւ Ռուսիոյ  
և Աւստրիոյ դէմ, ու մեռաւ յամին 1789:

Մուղան Սէլիմ Գ, որդի Մուսղաֆա-  
յի երրորդի, թագաւորեց 28 տարուան,  
յամին 1789, նստաւ 18 տարի, ապրե-  
ցաւ 47 տարի: Ուղեյով բարեկարգել  
բանակը և վերցունել Եէնիշէրինբըր-  
աթոսէն վար առին զինքն, ու փակե-  
ցին յամին 1807, և երկրորդ տարին  
սպաննեցին:

Մուղան Մուսղաֆա Գ, թագաւոր-  
եց յամին 1807. քիչ ժամանակէն  
պալատականը վար առին զինքը ու  
խղճեցին Մահմուտայ հրամանաւն որ  
անոր յաջորդեցի:

Մուղան Մահմուտ Բ, թագաւորեց  
յամին 1808, շատ պատերազմներ ը-  
րաւ Ռուսաց դէմ և գրեթէ միշտ կոր-  
սընցուց: Եէնիշէրեաց անսանձութիւնը  
յամին անցնելով, որոնք կ'ընդդիմանա-  
լին զինուորական և քաղաքական վե-  
րանորոգութեանց, որովք կ'ուզէր Մահ-  
մուտ կենդանացունել Օսմանեան պե-  
տութիւնը, զինու զօրութեամբ վերուց  
զանոնք յամին 1826: իրեն ժամանակն  
Յունաստան բաժնուեցաւ Օսմանեան  
կայսրութենէն և առանձին թագաւոր-  
ութիւն եղաւ արևմտեան մեծ տէրու-  
թեանց պաշտպանութեամբը: Ռուսիոյ  
հետ այլևայլ պատերազմներէն ետքը  
հարկադրուեցաւ Մահմուտ յամին 1829  
Ալքրիսնուպօլսի դաշնադրութիւնը կըն-  
քել:

Քանի մը կուսակալ փաշաներ ալ  
ապստամբեցան Մահմուտայ իշխանու-  
թեանը դէմ: Արդէն Ալի փաշա Եանեսա-  
յի զըլու քաշեց ու պատերազմաւ հա-  
կառակ կեցաւ թագաւորին հրամա-  
նացը: Մէհէմէտ Ալի փաշա Եդիպտո-  
սի թօթուեց Մահմուտայ հպատակու-  
թիւնն ու ինքնիշխան թագաւորեց և  
տիրեց Ասորոց յամին 1831, Մահմուտ  
ստիպուեցաւ ինդրելու Ռուսիոյ օգնու-

թիւնը, որուն հետ կնքեց Հիւնքերա-  
խակէլէսիի դաշինքը: Մէհէմմէտ Ալիի  
դէմ պատերազմն անյաջող գնաց և Նէ-  
ղիպայ պարտութիւնն վտանդի մէջ  
դրաւ Օսմանեան ինքնակալութիւնը:  
Մահմուտայ մահը վրայ հասնելով յա-  
մին 1839, ամենայն ինչ անստուգու-  
թեան մէջ մնաց:

Մուղան Ապտիւլ-Մէհիտ, անդրա-  
նիկ որդին Մահմուտայ յաջորդեց հօրը  
յամին 1839 յուլիսի 2, 'ի հասակի 16  
տարուան, և թագաւորեց 22 տարի:  
Եւրոպական տէրութիւնք միջամտելով  
ընդդէմ փաշային Եղիպտոսի, նորէն Ա-  
սորիքը ետ դարձուցին առ Օսմանեան  
պետութիւնն յամին 1840, ետքէն  
պաշտպանեցին Թուրքիան ընդդէմ Նո-  
րանոր յարձակմանց Ռուսիոյ՝ բանալով  
Ղրիմու պատերազմն յամին 1854, և  
դաշինք գնեցով 'ի Բարիզ յամին 1856:

Մուղան Ապտիւլ-Ազիզ, երկրորդ որ-  
դին Մահմուտայ յաջորդեց եղբօրն յա-  
մին 1861 յունիսի 25, 'ի հասակի 31  
տարուան, ու 'ի սկզբան շատ զեղեցիկ  
յոյսեր կու տար՝ որոնք չստուգուեցան:

Բարիզու համալսարնական Արուես-  
տահանդիսին առթիւ յամին 1867, Ա-  
պտիւլ-Ազիզ Եւրոպական վեհապետաց  
այցելութեան գնաց: Նախ Գաղղիա,  
ետքն Անգղիա, Գերմանիա ու Աւստրիա,  
և փոխադարձ ընդունեցաւ 'ի կոստան-  
դնուպօլիս այցելութիւնք կայսրուհոյն  
Գաղղիոյ, կայսերն Աւստրիոյ, Անգղիոյ  
թագաժառանգին, Գերմանիոյ կայսե-  
րական թագաժառանգին և ուրիշ թա-

գաւորականաց և իշխանաւորաց, Սա-  
կայն տէրութիւնն հետզհետէ անջքանա-  
լով իր անկարգ կառավարութեամբն,  
անցեալ մայիսի վերջերը զինքը վար  
ձգեցին աթոռէն՝ ճիշդ կոստանդնու-  
պօլի առման դարեդարձին երկրորդ  
օրը: Իրեն բնակութեանը համար նշա-  
նակուած պալատն մէջ գահընկեցու-  
թեանէն քանի մը օր ետև Ապտիւլ-Ազիզ  
ինքը զինքն սպաննեց՝ մկրատով երակ-  
ները բանալով 2 յունիսի 1876:

Մուղան Մուրատ Ե, անդրանիկ որ-  
դի Ապտիւլ-Մէհիտի, յաջորդեց իր հօ-  
րեղբօրը 'ի հասակի 36 տարուան: Բայց  
դահակալութենէն տասն օր ետքը վրան  
անբուժելի հիւանդութիւն մը եկաւ, և  
օրէ օր աւելի ծանրացաւ, որով անկա-  
րող համարուեցաւ թագաւորելու. ա-  
նոր համար երեք ամիսէն ետքը վար  
առնուեցաւ աթոռէն 31 օգոստոսի  
1876:

Մուղան Ապտիւլ-Համիտ Բ, երկրորդ  
որդին Ապտիւլ-Մէհիտի, յաջորդեց իր  
եղբօրն 'ի հասակի 34 տարուան յամին  
1876 օգոստոսի 31, և է երեսներորդ  
չորրորդ Օսմանայ ցեղէն, և քսաներորդ  
ուխերորդ սկսեալ կոստանդնուպօլիս  
առմանէն:

Թուրքիոյ արքայական ցեղը, որուն  
նախահայրն է Օսման Ա, որ հաստա-  
տեց թագաւորութիւնը Գոնեայի մէջ  
յամին 1299, կը տևէ 577 տարուա-  
նէ 'ի վեր, իսկ թագաւորութեան ա-  
թոռն կոստանդնուպօլիս փոխադրուե-  
լէն 'ի վեր 423 տարի է:

**ՔԱՂԱՔԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԹՈՒՐԻՔԻՈՑ**

Օսմանեան պետութիւնն ըստ երից մասանց աշխարհի, որոնց մէջ կը տարա-  
ժուի, երեք մեծամեծ մասունք կը բաժնուի. Եւրոպական մասը կ'ըսուի Ռուսի-  
լի, ասիականն՝ Անատոլու, և ասորիկեանն ըստ զանազանութեան գաւառացն  
զանազան անուն ունի: Եւ անմիջական կալուածներն ըստ արդի կարգադրու-